ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՅԱՆՔ ЖИЗНЬ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1969 թ. հունվար—հունիս)

ԲՈՒԼՂԱՐԻԱ

Փետրվարի 18-ին Պլովդիվում մահացել է Բուլղարիայի պետական օպերայի գլխավոր բեմադրիչ Պողոս Աֆեյանը։

Նա օպերաներ էր բեմադրել նաև Երևանի օպերայի և բալետի թատրոնում։

«Աշխարհ», 26 մարտի

* * *

Մարտի 19-ին Վառնայի «Երևան» ակումբում տեղի է ունեցել Եղիշե Չարենցի ծննդյան 72-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ։

Չարենցի կյանքի և ստեղծագործությունների մասին զեկուցել է Ա. Մկրտչյանը։ Այնուհետև աշակերտության ուժերով տրվել է համերգ, որտեղ կատարվել են Չարենցի ստեղծագործությունները։

«Երևան», 4 ապրիլի

* * *

Ապրիլի 20—28-ը Սոֆիայում, Պլովդիվում, Վառնայում, Խասքովոյում մեծ հանդիսավորությամբ նշվել է Մեծ եղեռնի զոհ դարձած հայ նահատակների հիշատակը։

«Երևան», 25 ապրիլի
2 մայիսի

ՌՈՒՄԻՆԻԱ

Բուխարեստի ռադիոն «Նշանակալի մարդիկ» հաղորդումների շարքում փետրվարի 13-ին կազմակերպել է հաղորդում նվիրված Հովհաննես Թումանյանին։ Կարդացվել են հատվածներ Թումանյանի «Ինքնակենսագրությունից», «Գիքորից», բանաստեղծություններից, քառյակներից և «Անուշից»։

Գրական թարգմանությունը կատարվել է հաղորդման կազմակերպիչ խմբագիր, երաժշտագետ Մելինե Բոլատյան-Կենեայի կողմից։

«Նոր կյանք», 21 փետրվարի

ԼԻԲԱՆԱՆ

Լիբանանահայ տաղանդավոր երգչուհի Լուիզա Պոզապալյանը արժանացել է Բրյուսելի միջազգային մրցանակաբաշխության «Պատվո մրցանակին» և ոսկյա մեդալին, ապա Վերդիի ծննդավայր Բուսեթթոյում՝ «Վերդիական երգիչների» միջազգային մրցանակաբաշխության առաջին մրցանակին։

«Սևան», 6 նոյեմբերի

* * *

Բեյրութում տեղի է ունեցել հայ գրականության շաբաթ, որին մասնակցել են Վահե Վահյանը, Ալֆոնս Դարյանը, Գառնիկ Ադդարյանը, Գևորգ Ահեմյանը և ուրիշներ։

Հայ գրականության շաբաթը մեծ հետաքրքրություն է առաջ բերել Բեյրութի հայ համայնքի լայն շրջանների մեջ։ Շաբաթի մասնակիցները հայ գրականության զարգացման հարցերից բացի քննարկել են նաև արաբ-հայկական մշակութային կապերը ընդարձակելու հարցերը։ Նշվել է նաև լիբանանահայ մտավորականության և Սովետական Հայաստանի մտավորականության կապերի ամրապնդման անհրաժեշտությունը։

«Աշխարհ», 8 փետրվարի

* * *

Բեյրութի Կալերի Մանուկ սրահում մարտի 7-ին բացվել է նկարների ցուցահանդես նվիրված Կոմիտասի ծննդյան 100-ամյակին։ Ցուցահանդեսը կազմակերպել է Հ. Ե. Ը.-ի համալսարանական ուսանողական միության մշակութային հանձնախումբը։

Ցուցահանդեսի բացմանը ներկա են եղել «Ակադեմի դը բո զ՝ արթ»-ի տնօրեն Ալեքսի Պուիրոսը, որը հովանավորում է ցուցահանդեսը, բազմաթիվ պաշտոնական անձինք և հայ, արաբ ու եվրոպացի արվեստասերների հոծ բազմություն։

Արաբերեն լեզվով բացման խոսք է ասել Պերճ Սեդրակյանը, իսկ հայերեն լեզվով ելույթ է ունեցել Հերմինե Հաճընյանը։ Այնուհետև ֆրանսերեն ելույթ է ունեցել Ալեքսի Պուիրոսը, որը ասել է, թե ինքը սիրահոժար կերպով հանձն է առել հովանավորել ցուցահանդեսը, ո-

ղովհետև իր ուսուցիչը աշակերտել է Կոմիտասին և ինքն էլ շատ լավ ծանոթ է Կոմիտասի երաժշտությանը։

«Զարթոնք», 13 մարտի

* * *

Բեյրութի Գալուստ Կյուլպենկյան սրահում Թեքեյան մշակութային միությունը մարտի 27-ին կազմակերպել է Երվանդ Օտյանի ծննդյան 100-ամյակին նվիրված երեկո։ Օտյանի մասին հանդամանորեն արտահայտվել են Երվանդ Պապայանը, նշանավոր ծաղրանկարիչ Ալ. Սարուխանը և բանաստեղծ Վահե Վահյանը։

Վերջում տեղի ունեցավ ճոխ համերգ։

«Արարատ», 31 մարտի

* * *

Կոմիտասի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Բեյրութի նոր սերունդ մշակութային միության և Սահակյան շրջանավարտից միության վարչությունների կողմից կազմակերպվել է «Կոմիտասի շաբաթ», որի բացումը տեղի է ունեցել ապրիլի 9-ին։

«Արարատ», 10 ապրիլի

* * *

Բեյրութի նոր սերունդ մշակութային միության և Սահակյան շրջանավարտից միության նախաձեռնությամբ Սահակյան լիցեյի սրահում ապրիլի 11-ին տեղի է ունեցել երկրորդ երեկոն նվիրված Կոմիտասի ծննդյան 100-ամյակին։ «Կոմիտասը գեղարվեստական գրականության մեջ» վերնագրով զեկուցում է կարդացել բանաստեղծ Գառնիկ Ադդարյանը։ Այնուհետև տրվել է ճոխ համերգ, կազմված Կոմիտասի ստեղծագործություններից։

«Զարթոնք», 14 ապրիլի

* * *

Ապրիլի 22-ին Բեյրութում տեղի է ունեցել հանդիսավոր երեկո նվիրված Մեծ եղեռնի 54-րդ տարեդարձին։ Սեն Ժոզեֆ համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ Մորիս Թալոն զեկուցում է կարդացել հայասպանության մասին։ Զեկուցումներ են կարդացել Վազգեն Այդունին և լիբանանցի փաստաբան Մուսա Փրենսը։ Զեկուցումները կարդացվել են ֆրանսերեն։

«Զարթոնք», 30 ապրիլի

* * *

Բեյրութի Հայկական կոլեջի հայկական և արարական ակումբները ապրիլի 22-ին կազմակերպել են երեկո նվիրված Մեծ եղեռնի նահատակների հիշատակին։ Բացման խոսքով հանդես է եկել արարական բաժանմունքի վարիչ դոկտ. Ժորժ Ժետեոնը։ Լևոն Վարդանը բանախոսել է անգլերեն, երեք ժամ տևողությամբ, կանգ առնելով հայկական կոտորածների ողջ պատմության վրա։

«Զարթոնք», 30 ապրիլի

* * *

Լիբանանի Պիքֆայա քաղաքի մուտքի մոտ հսկա հուշարձան է կառուցվել ապրիլյան եղեռնի զոհերի հիշատակին, որի հանդիսավոր բացումը կատարվել է ապրիլի 24-ին Լիբանանի հանրապետության նախագահի ներկայացուցչի նախագահությամբ և բարձրաստիճան անձերի ու մեծ թվով բազմության ներկայությամբ։ Հուշարձանի հեղինակն է Զավեն Խրտրշյանը, կառուցված է այն կարմիր պղնձից և ունի 13,5 մ բարձրություն, տեղադրված է 10մ բարձրության ապառաժի վրա։

«Ջահակիր», 1 մայիսի

ՍԻՐԻԱ

Հալեպում ապրիլի 27-ին տեղի է ունեցել եկեղեցական և ազգային հանդիսություն նվիրված ապրիլի 24-ի հայ նահատակների հիշատակին։

«Արարատ», 9 մայիսի

ՍՈՒԴԱՆ

Խարթումում ապրիլի 24-ին կազմակերպվել է հուշահանդես ի հիշատակ 1915 թ. Մեծ եղեռնի նահատակների։ Գեղարվեստական բաժնում բանաստեղծություններ են արտասանվել Սիամանթոյից, Վ. Թեքեյանից, Շիրազից, Ս. Կապուտիկյանից։

«Զարթոնք», 22 մայիսի

ԻՐԱՆ

Վերջերս Թեհրանում Ալեք Խաչատրյանը պարսիկ ընթերցողին է ներկայացրել Ավ. Իսահակյանի «Արու Լալա Մահարի» պոեմի թարգմանությունը։ Այնուհետև պարսկերեն լույս է տեսել մի նոր գիրք ևս, որտեղ տրված են Պետրոս Դուրյանի, Սիամանթոյի, Դանիել Վարուժանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Շ. Կուրղինյանի, Ս. Զարենցի, ինչպես նաև Հովհ. Շիրազի, Ս. Կապուտիկյանի, Պ. Սևակի, Հ. Սահյանի, Դևի, Գեղամ Սարյանի, Վ. Դավթյանի, Հենրիկ Թումանյանի և Ա. Դարբնու ստեղծագործությունները։ Ժողովածուն, որ Հ. Շիրազի պոեմի անունով կոչվում է «Բիբլիական», նկարազարդել է իրանահայ բանաստեղծ և նկարիչ Դևը։

Գիրքը բացվում է պարսիկ բանաստեղծ Ահմագե Շամլուի խոսքերով։ Թարգմանիչն ընթեր-

ցողին համառոտակի ծանոթացնում է հայ գրականության պատմության անցած ուղուն՝ սկսած Մովսես Խորենացուց մինչև Սայաթ-Նովա։

«Արարատ», 14 մարտի

* * *

Մարտի 5-ին Թեհրանում երեկույթ է կազմակերպվել նվիրված Երևանի 2750-ամյակին։ Իրանի և Հայաստանի ժողովուրդների բարեկամության և Հայաստանի զարգացման մասին է խոսել ՍՍՀՄ-ի հետ կուլտուրական կապի իրանական ընկերության գլխավոր քարտուղար Ֆորուշանին։ Այնուհետև Երևանի 2750-ամյակի մասին զեկուցումով հանդես է եկել Իրանի հետ կուլտուրական կապի սովետական ընկերության վարչության նախագահի տեղակալ Ա. Խաչիկյանը։ Սրահներում կազմակերպվել է լուսանկարչական ցուցահանդես նվիրված Երևանի հորելյանին։ Վերջում ցուցադրվել են վավերագրական ֆիլմեր։

«Արարատ», 19 մարտի

* * *

«Արարատում» որոշ կրճատումներով տպագրվել է պարսիկ գրող Ամիր Թահիրի հոդվածը, ուր ասվում է, թե Իրանի հայության մեծ մասը ապրում է Թեհրանում, նրանց թիվը 100 հազարի է հասնում։ Գրողը անդրադառնում է հայ և պարսիկ ժողովուրդների դարավոր կապերին. խոսում է Իսֆահանի հայագիտական ամբիոնի մասին։

Հայերը զարգացած համայնք են կազմում Իրանում, մեծ գործ են կատարում օտար գրականությունը պարսկախոս հասարակությանը ներկայացնելու գործում։ Երկրում կան շուրջ 30 հայկական դպրոցներ, 6 հայկական հրատարակություններ, ամեն տարի հրատարակվում է մոտ 40 գիրք։

«Արարատ», 11 մայիսի

ԹՈՒՐՔԻԱ

Կ. Պոլսում հայության թիվը 65 հազարից ավելի է։ Դպրոցների թիվը հասնում է 28-ի, որոնցից 5-ը՝ երկրորդական (լիցեյ), 8-ը՝ միջնակարգ, մնացյալները՝ նախակրթարան։ Աշակերտների թիվը հասնում է 8 հազարի։ Գաղութը ունի մշակութային միություն, որի ատենապետն է «Քուլիս» ամսագրի խմբագիր Հ. Այվազը։

Հրատարակվում են երկու օրաթերթեր՝ «Ժամանակ» և «Մարմարա», «Քուլիս» ամսագիրը, «Արշավ» շաբաթաթերթը, «Կավոռշ» երգիծաթերթը, «Ս. Փրկիչ» ամսագիրը, «Սան» գրական-գեղարվեստական պարբերաթերթը, «Պարտեզ» մանկական ամսագիրը, «Երչանիկ» տարեգիրքը։

Ինչպես հայտնում է «Հառաջը», «Թուրքիոյ ներքին գավառներուն մէջ կապրին շուրջ քսան հազար հայեր, ցրված Անկարայի, Կեսարիոյ, Խարբերդի, Ամասիո, Յոզկատի, Տիգրանակերտի մէջ և այլուր։ Անոնց վիճակը ոգբալի է։ Ասոնցմէ զատ՝ կան տակավին թրքացած հայեր, որոնց թիվը հայտնի չէ»։

«Հառաջ», 19 հունվարի

* * *

Կ. Պոլսում «Խաչատուրյան» երգչախումբը, որ մեկ և կես տարի առաջ է ստեղծվել, ապրիլի 25-ին «Սարայ» կինոթատրոնի սրահում իր անդրանիկ պաշտոնական համերգն է տվել։ Համերգի հայտագիրը բաղկացած է եղել Կոմիտասի, Ալթունյանի, Ատնան Սայկունիի, Ժ. Ասլանյանցի և ժողովրդական երգերի հատընտիր գործերից։ Երգչախումբը ղեկավարել է ուսանող Խաչիկ Եըլմազը։

«Ջահակիր», 22 մայիսի

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Աթենքի անգլիական մշակութային հաստատությունում փետրվարի 21-ին տեղի է ունեցել օր. Էլզա Մաղազյանի նկարների ցուցահանդեսի բացումը։ Ցուցադրվել են 31 յուղաներկ և ջրաներկ նկարներ։

Տեղական հունարեն մի քանի թերթերի քննադատներ գովեստով են արտահայտվել հայազգի նկարչուհու ստեղծագործությունների մասին։

«Պայքար», 2 ապրիլի

ԿԻՊՐՈՍ

Այս տարվանից Նիկոզիայի ռադիոկայանը շաբաթը երկու անգամ հայերեն հաղորդումներ է տալու Կիպրոսի և մերձակա երկրների հայերի համար։

«Ջահակիր», 2 հունվարի

* * *

Մելքոնյան կրթական հաստատությունը ապրիլի 19-ին մեծ շուքով նշել է Երևանի 2750-ամյակը։ Տոնակատարության վերջում ցուցադրվել են Երևանի 100-ից ավելի մեծադիր նկարները։ Հաստատությունը վերջին մեկ տարվա գործունեության ընթացքում նշել է Մեծարենցի մահվան 60-ամյակը, Ռաֆֆու մահվան 80-ամյակը և Լևոն Շանթի ծննդյան 100-ամյակը։

«Զարթոնք», 1 մայիսի

ՖՐԱՆՍԻԱ

Լույս է տեսել ֆրանսերեն 15 հատորանոց «Տիեզերական համայնագիտարանի» առաջին

հատորը, որտեղ պատշաճ տեղ է տրված Խաչատուր Աբովյանին։

«Աշխարհ», 11 հունվարի

* * *

Հունվարի 15-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի սրահներից մեկում տեղի է ունեցել Երևանի 2750-ամյակին նվիրված հանդիսավոր երեկույթ։ Տոնահանդեսին, որ կազմակերպել էին «Ֆրանսիա—ՍՍՀՄ» ընկերությունը, ֆրանսահայերի մշակութային միությունը և ֆրանսահայ երիտասարդության միությունը, մասնակցել են մշակույթի ու գիտության ֆրանսիացի և հայ բազմաթիվ գործիչներ, ինչպես նաև սովետական պատվիրակությունը։ Ֆրանսիայում ՍՍՀ Միության դեսպան Վ. Ա. Զորինը ներկաներին պատմել է սովետական իշխանության տարիներին Հայաստանի ձեռք բերած նվաճումների մասին։ Երեկույթի վերջում ցուցադրվել է Երևանին նվիրված կինոնկար։ Տարեթվի առթիվ Փարիզում բացվելու է Երևանի 2750-ամյակին նվիրված ցուցահանդես։

«Սովետական Հայաստան», 17 հունվարի

* * *

Վերջերս ֆրանսիական «Մոնդ» թերթը հոդված է նվիրել հայ ազգային ճարտարապետությանը, որը կրում է «Հայկական հրաշք» խորագիրը։ Հոդվածագիր Ֆրանկ Էլգարը մեկ անգամ ևս հաստատում է ավստրիացի ճարտարապետ Ստրժիգովսկու և արվեստի տեսաբան Բայլտրուջայտիսի այն տեսակետը, թե եվրոպական ճարտարապետության (ռոմանական և գոթական ոճերի) ձևավորման վրա պատկառելի ազդեցություն է ունեցել հայկական միջնադարյան ճարտարապետությունը։ Հեղինակը դա բացատրում է նրանով, որ հայերը դեռևս V դարից սկսել են գաղթել Բյուզանդիա, Եգիպտոս, Պաղեստին, Միջերկրականի ափերը և այլուր, որտեղ բնական է, որ նրանք պետք է տարածեին իրենց մշակույթը։

Ֆ. Էլգարը շատ բարձր է գնահատում հայ գեղագիտական միտքը, նրա ճարտարապետության յուրահատկությունը բացատրում է երկրի կլիմայի խստությամբ, ժողովրդի աշխատասիրությամբ և քարի առատությամբ։

«Երեկոյան Երևան», 14 փետրվարի

* * *

Փետրվարի 12-ին մահացել է հայ բեմի վաստակավոր դերասան Արտաշես Գմբեթյանը։

«Զահակիր», 6 մարտի

* * *

Փարիզում հրատարակվող «Ռըվյու դեզ էտյուդ Արմենիեն» պարբերականը հատուկ համար է հրատարակել՝ նվիրված անվանի բանաստեղծ և պատմաբան Սիրարփի Տեր-Ներսեսյանի ծննդյան 70-ամյակին։

«Զարթոնք», 9 ապրիլի

* * *

Ալֆորվիլում Սիփան—Կոմիտաս երգչախմբի համերգի ժամանակ քաղաքապետ Ժ. Ֆրենսինը հայտարարել է, որ Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առթիվ Ալֆորվիլի փողոցներից մեկին տրվելու է Կոմիտասի անունը։

«Աշխարհ», 19 ապրիլի

* * *

Փարիզում հրատարակվել է Հովհ. Թումանյանի «Քաջ Նազարը»՝ պատկերազարդ և գունավոր։ Նկարազարդել է Կարեն Սմբատյանը՝ Երևանից, արևմտահայերենի է վերածել ստամբուլահայ բանաստեղծ Արտո Ճյումպուշյանը։ «Քաջ Նազարը» հրատարակել է Փարիզում հիմնված «Էրեբունի» հրատարակչությունը, որը նպատակ ունի սփյուռքահայ երեխաների համար մայրենի լեզվով հրատարակել հայ և համաշխարհային գրականությունից ընտիր երկեր։

Հրատարակչությունը իր գործունեությունը սկսել է Հ. Թումանյանի մանկա-պատանեկան ստեղծագործությունների շարքով, մեծ բանաստեղծի ծննդյան հարյուրամյակի կապակցությամբ։ Արդեն տպագրության են պատրաստ և հաջորդաբար լույս պետք է տեսնեն Թումանյանի «Անբախտ վաճառականները», «Փարվանան», «Մի կաթիլ մեղրը», «Թմկաբերդի առումը», «Գիքորը» և «Շունն ու կատուն», որ նկարազարդել են Հայաստանի մի խումբ նկարիչներ։

Հրատարակչությունը նախաձեռնել է այս գործերը հրատարակել նաև անգլերեն և ֆրանսերեն լեզուներով։

«Զարթոնք», 26 ապրիլի

* * *

Փարիզում և Մարսելում հանդիսավորությամբ նշվել է 1915 թ. եղեռնի 54-րդ տարեդարձը։

«Աշխարհ», 3 մայիսի

* * *

Փարիզահայ նկարիչների «Թորոս Ռոսլին» ընկերության հրավերով մայիսի 13-ին Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության «Ֆրանկ և փորթուկալյան մշակութային կեդրոնում» տեղի է

ունեցել Սիրարփի Տեր-Ներսեսյանի դասախոսությունը նվիրված Թորոս Ռոսլինին։

«Աշխարհ», 21 մայիսի

* * *

Մայիսի 18-ին Տրանկինյանի հայ համայնքը նշել է 1915 թ. Մեծ եղեռնի նահատակների հիշատակը։ Հոգեհանգստի արարողությունից հետո փոքրիկ համերգ է տրվել, իսկ այնուհետև 180 դիապոզիտիվներով ցուցադրվել է այժմյան Հայաստանը իր հաջողություններով։

«Աշխարհ», 28 մայիսի

ԱՆԳԼԻԱ

Դեկտեմբերի 29-ին Լոնդոնում Ազգային և եկեղեցական խորհրդի նախաձեռնությամբ նշվել է Երևանի 2750-ամյակը։ Նիստին նախագահել է Լոնդոնի համալսարանի կովկասյան բաժնի վարիչ պրոֆ. Լանգը։ Ելույթ են ունեցել պրոֆ. Մկրտիչ Շահինը, Բրիտանական թանգարանի վարիչներից ակադեմիկոս Պանեթը, Հայկ Գալուստյանը, Ասատուր Կյուզելյանը, Հարություն Այվազյանը և ուրիշներ։

«Ջահակիր», 13 փետրվարի

* * *

Լոնդոնում փետրվարի 1-ին նշվել է Կոմիտասի ծննդյան հարյուրամյակը։ Երիտասարդ դերասան Գևորգ Մալիքյանը անգլերեն զեկուցում է կարդացել Կոմիտասի կյանքի մասին։ Այնուհետև Արսեն վրդ. Պերպերյանը ներկաներին հայերեն զեկուցումով ծանոթացրել է Կոմիտասի երաժշտության հետ։ Վերջում տրվել է գեղարվեստական ճոխ համերգ «Կոմիտաս» երգչախմբի մասնակցությամբ։

«Աշխարհ», 1 մարտի

* * *

Հայկական բարեգործական ընդհանուր միության Լոնդոնի մասնաճյուղի նախաձեռնությամբ փետրվարի 3-ին Վիկմոր Հոլի հայտնի սրահում Գոհար Գասպարյանը համերգ է տվել, որն անցել է մեծ հաջողությամբ։

«Նոր օր», 7 մարտի

* * *

Լոնդոնի հայ համայնքը ապրիլի 24—27-ին արժանավոր հանդիսավորությամբ նշել է 1915 թ. եղեռնի նահատակների հիշատակը։

«Արարատ», 13 մայիսի

ԻՏԱԼԻԱ

Փետրվարի 13-ին Միլանում մահացել է իտալահայ մշակութային միության նախագահ դոկտ. Արամայիս Սրապյանը։

«Ջահակիր», 6 մարտի

ԿԱՆԱԴԱ

Մոնրեալի Մաքկիլ համալսարանի «Մոյս» սրահում ապրիլի 26-ին մեծ հանդիսավորությամբ նշվել է 1915 թ. ապրիլյան եղեռնի զոհերի հիշատակը։

«Զարթոնք», 15 մայիսի

ԱՄՆ

Նյու-Յորքում, Կարնեգի Հոլի սրահում, հունվարի 13-ին տեղի է ունեցել Տիգրան Ժամկոչյանի երգահանդեսը։ «Նյու-Յորք Թայմսը» երգչին գնահատել է որպես «տաղանդավոր, երիտասարդ պարիթոն մը»։

«Զարթոնք», 15 հունվարի

* * *

Նյու-Յորքի Հ. Բ. Ը. Միության կենտրոնում բացվել է լիբանանահայ երիտասարդ նկարիչ Լևոն Ժամկոչյանի ցուցահանդեսը, որին ներկա են եղել Լիբանանի և Իտալիայի դեսպանները, դիվանագիտական անձինք, հայկական կազմակերպությունների ղեկավարներ և հոծ բազմություն։

Ժամկոչյանը ներկայացրել է 40 յուղանկար, 20 ջրանկար, 20 գծագիր նկարներ և 37 փորագրություններ։

«Պայքար», 21 հունվարի

* * *

Բոստոնում տեղի Թեքեյան մշակութային միության նախաձեռնությամբ «Պայքարի» սրահում մարտի 9-ին երեկույթ է կազմակերպվել նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան հարյուրամյակին։

«Պայքար», 19 մարտի

* * *

Թեքեյան մշակութային միության հրավերով Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առթիվ Ամերիկա է հրավիրվել Լուսինե Զաքարյանը, որը ապրիլի 13-ին իր առաջին համերգով հանդես է եկել Բոստոնում։

«Աշխարհ», 7 մայիսի

* * *

Նյու-Յորքում «Կյուլապի Կյուլպենկյան» մշակութային միության հանդիսասրահում ապրիլի 18-ին կազմակերպվել է նկարչական ցուցահանդես, որտեղ ցուցադրվել են անվանի հայ նկարիչներ Ս. Սամսոնյանի, Փոլ Կիրակոսյանի, Կալենցի, Էդգար Շահինի, Հովհ. Ասատրյանի, Աբրահամ Գուրգենյանի, Սարգիս Խաչատրյանի և Տեմոնի գործերը։

Ցուցահանդեսը մեծ հոչողություն է ունեցել։

«Ջահակիր», 15 մայիսի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ